

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝



Թ. Հակոբյան

«01» Միայնակերպ 2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«2022-2023թթ.» ուսումնական տարի

Վայոց ձորի մարզ \_\_\_\_\_ Վայքի ա/դ 12 հում \_\_\_\_\_ դասարան

Հայկուհի Արսուշի Մարկոսյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Թ. Հակոբյան

«-----» -Սեպտեմբեր 2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«2022-2023թթ. » ուսումնական տարի

Վայոց ձորի մարզ Վայքի ա/դ 12 հում դասարան

Հայկուհի Արտուշի Մարկոսյան



## *Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն*

### **Ուսումնական տարվա սկզբին**

1. Կազմել աշակերտների անվանացանկը և լրացնել էլ. մատյանը
2. Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

### **Ամենօրյա աշխատանք**

1. Դասամատյանում նշել բացակայությունները
2. Հետևել կարգապահությանը
3. Հետևել հերթապահությանը դասարանում

### **Ամենշաբաթյա աշխատանք**

1. Ստուգել աշակերտների հաճախումները
2. Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից
3. Անցկացնել դասղեկական ժամեր
4. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

## **Ամենամյա աշխատանքներ**

- 1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին
- 2.Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը
- 3.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում
- 4.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում

## **ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը ) *Դասարանը բաղկացած է ----- հոգուց՝ --- տղա --- աղջիկ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: :*

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

## **3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

**3.2 Գեղագիտական դաստիարակություն** Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն** Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինը ֆիզվարժությունների միջոցով, ակտիվ մասնակցեն առավոտյան նախաօրվարժանքին:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն** Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է, խնամել դպրոցամերձ այգին:

**4. Դպրոց-ընտանիք կապը** Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն: Հաճախակի այցելել աշակերտների տուն՝ մոտիկից ծանոթանալու նրանց առօրեային, հրավիրել ծնողխորհրդի անդամներին, քննարկել ու կարգավորել առաջ քաշված խնդիրները

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ցանկություն
09-09-22	Աշակերտներին ներկայացնել նոր ուսումնական տարվա խնդիրները, անելիքները	
16-09-22	Աշակերտական ինքնավարության մարմինների ընտրություն	
23-09-22	« Հայրենիքի խաղաղությունը վտանգված է »- գրույց - քննարկում	
30-09-22	« Հայրենիքի և տարածքի տարբերությունը » օգնություն առաջնագծի զինվորին	
07-10-22	« Գարեգին Նժդեհի մտքերից »- գրույց- քննարկում	
14-10-22	« Եթե ես լինեի ... »- մտքերի փոխանակություն, տեսակետ	
21-10-22	Լեոնիդ Ենգիբարյան «Աստիճանը»- քննարկում	
04-11-22	«Մատիտը», առակ, որ պետք է իմանա յուրաքանչյուրը - տեսակետ	
11-11-22	«Ինչպես ձևավորել ուժեղ բնավորություն» , քննարկում	
18-11-22	Ինչպես գրել նամակ, ի՞նչ կարոող է բացահայտել նամակը	
25-11-22	Պետական խորհրդանիշներ, «Ի՞նչ են սովորեցնում նրանք մեզ»-քննարկում	
02-12-22	Իսկ դուք ինչի վրա եք ծախսում ձեր ժամանակը , «Ժամանակը ոսկի է»-քննարկում	
09-12-22	Ինչպիսի որակներ պիտի ունենա քաղաքացին, քաղաքացի լինելն ինչքանո՞վ է առնչվում մեզ:	
16-12-22	Նպաստել հայրենաճանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները:	
23-12-22	Ես հրեշտակ չեմ եղել, բայց որքան կարողացել եմ, ձգտել եմ մարդ լինել: Փորձիր և դու: Չապլինի նամակը դստերը՝ Ջերալդինային:	
13-01-23	«Ճերմակ անուրջներ» ֆիլմի դիտում և քննարկում	
20-01-23	Մարդը պետք է ապրի բարության մթնոլորտում	









## Դաստիարակչական աշխատանք

Գործառույթները	Նպատակն ու խնդիրները	Ուղղվածությունը
1. Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1. Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1. Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2. Կազմակերպչական գործառույթ	2. Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2. Դասեր՝ նվիրված հայրենիքին, քաղաքին
3. Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3. Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3. Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժան վայրեր
4. Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4. Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3. Վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
6. Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը	5. Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	4. Տարբեր խմբակների, զրույցների, բանավեճերի կազմակերպում
	6. Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում
	7. Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում	

*Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը*

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Նպատակը	Ուսումնական շաբաթը	Կատարման ժամկետը
	<b>1-ին կիսամյակ</b>		
Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	Մշակել կանոններ դպրոցում աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին	1-ին շաբաթ	15-19.09.2020
Աշխարհայացք	Մտորենք այն գաղափարի շուրջ, որ մեր առջև բացված են բազմաթիվ հնարավորություններ, իսկ մենք ծախսում ենք մեր կյանքն անիմաստ զբաղմունքների վրա կյանքը լիարժեք վայելելու և մեզ համար նոր հորիզոններ բացահայտելու փոխարեն	2-րդ շաբաթ	
Չարլի Չապլինի խրատ-նամակը իր	Ես հրեշտակ չեմ եղել, բայց որքան կարողացել եմ,	3-րդ շաբաթ	

դասերը՝ Ջերալդինային	ձգտել եմ մարդ լինել: Փորձիր և դու:		
Շրջակա միջավայրի պահպանություն	Քննարկել շրջակա միջավայրի վրա ազդող տարատեսակ գործոնները և քննարկել, թե ինչպես կարելի է պահպանել շրջակա միջավայրը:	4-րդ շաբաթ	
Ինչպես գրել մոտիվացիոն նամակ	Կարևորագույն հարցերի առանձնացում, որոնց պատասխանելու անհրաժեշտություն կլինի նամակը գրելու ընթացքում:	5-րդ շաբաթ	
Նապոլեոն Հիլ «Մտածիր և հարստացիր»	Քննարկել «Դու այն ես, ինչ մտածում ես» միտքը:	6-րդ շաբաթ	
Քաղաքացիական ինքնություն	Ինչպիսի որակներ պիտի ունենա քաղաքացին, քաղաքացի լինելն ինչքանո՞վ է առնչվում մեզ:	7-րդ շաբաթ	
Հանդուրժող վարքի սկզբունքները	Վերհանել հանդուրժող մարդուն բնորոշ առանձնահատկությունները: Ձևավորել հանդուրժող վերաբերմունք:	8-րդ շաբաթ	
Էթիկայի պատմությունը	Մտորել Էթիկայի «ուսկե կանոն»-ի մասին. «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ցանկանում քեզ»:	9-րդ շաբաթ	
«Մատիտը», առակ, որ պետք է իմանա յուրաքանչյուրը	Մեր փորձը և մեր գիտելիքները մեզ տրվում են դժվարությունների ու փորձությունների միջով	10-րդ շաբաթ	

	անցնելիս և մենք բոլորս կոչված ենք մեր հետքը թողնելու աշխարհում:		
Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը	Նպաստել հայրենաճանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները:	11-րդ շաբաթ	
Ինչպես գրել գրագետ ինքնակենսագրական նամակ /CV/	Կարևոր կետերի վերհանում	12-րդ շաբաթ	
Պետական խորհրդանիշներ	Կարևորել պետությունների անկախությունը և պետական խորհրդանիշները	13-րդ շաբաթ	
Առաջնորդվենք Գեներալ դը Գոլի կոչերով	Մտորել այն գաղափարի շուրջ, որ յուրաքանչյուրն իր հույսը պետք է դնի միայն իր վրա:	14-րդ շաբաթ	
Գարեգին Նժդեհի հզոր մտքերը	Դու հաջողակ ես, հարկավոր է միայն հավատալ դրան և շարժվել առաջ:	15-րդ շաբաթ	
Եթե ես լինեի...	Հստակեցնել յուրաքանչյուր աշակերտի ցանկությունները:	16-րդ շաբաթ	
Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	Մտորել բացթողումների և ձեռքբերումների շուրջ:	17-րդ շաբաթ	

	<b>2-րդ կիսամյակ</b>		
Ծանոթացում Էդուարդ դե Բոնոյի «Մտածողության վեց գլխարկ» մեթոդին:	Քննարկելու և բանավիճելու հմտությունների ձեռքբերում:	1-ին շաբաթ	
ՀՀ ազգային հերոսներ	Ճանաչենք մեր ազգային հերոսներին	2-րդ շաբաթ	
Առաջնորդներ, ովքեր պատմություն են կերտել /Ուինսթոն Չերչիլ, Դավիթ Բեն Գուրիոն, Մարգարետ Թետչեր, Ինդիրա Գանդի, Լի Կուան Յու/	Ծանոթանալ այն մեծագույն առաջնորդների հետ, ովքեր արբեր ժամանակներում անջնջելի հետք են թողել մարդկության պատմության մեջ:	3-րդ շաբաթ	
Ընթերցում ենք Վարդգես Պետրոսյան	Անցած կյանքը նման է հին ջրաղացի. կա հոսող ջուր, կան ջրաղացներ, իսկ տարիները ցորեն են կուտակել` ինչքան ուզես: Բավական է հասարակ մի հանդիպում, որ իրար առնեն ծանոթ հայացքները, և ջրաղացքարերը կսկսեն պտտվել. ցորենն այլուր կդառնա, կյանքը կլցվի անցած օրերի աղմուկներով:	4-րդ շաբաթ	
«Ճերմակ անուրջներ» ֆիլմի դիտում և քննարկում	Մարդ արարածը, եթե հոգիին մեջ երկինք չունի, ան ի՞նչ գիտե աղունիկն ի՞նչ է...	5-րդ շաբաթ	
Բարության դասեր	Մարդը պետք է ապրի բարության մթնոլորտում	6-րդ շաբաթ	

<p>Բոլոր լավ սովորությունների հիմքը հոգատարությունն է</p>	<p>Հոգատարությունը, բարությունը ամրապնդում են փոխհարաբերությունները ժողովուրդների միջև, ամրացնում են ընտանիքը, ուժեղացնում են բարեկամությունը</p>	<p>7-րդ շաբաթ</p>	
<p>Վրթանես Փափազյանի «Ըմբոստի մահը» ստեղծագործության քննարկում</p>	<p>Մեղադրենք Ըմբոստին, թե՞ արդարացնենք</p>	<p>8-րդ շաբաթ</p>	
<p>Ապահով համացանց</p>	<p>Համացանցի օգտագործման հնարավորությունների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում</p>	<p>9-րդ շաբաթ</p>	
<p>Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն ճայր» ստեղծագործության քննարկում</p>	<p>Թոշելու ունակությունը հարկավոր չէ օգտագործել միայն ուտելիք հայթայթելու համար, այլ այն օգտագործել որպես կատարյալին հասնելու, կատարելագործվելու միջոց</p>	<p>10-րդ շաբաթ</p>	
<p>Ի՞նչ է մեղիագրագիտությունը, ո՞վ է մեղիագրագետ սպառողը</p>	<p>Ձայնի ու պատկերի լեզուն չիմանալը նույնն է, թե առանց գրել-կարդալ սովորելու դպրոցն ավարտել:</p>	<p>11-րդ շաբաթ</p>	
<p>Աշխարհի հայ երաժիշտները</p>	<p>Ճանաչենք աշխարհի հայ երաժիշտներին</p>	<p>12-րդ շաբաթ</p>	
<p>Իսկ դուք ինչի վրա եք ծախսում ձեր ժամանակը</p>	<p>Մեր առջև բացված են բազմաթիվ հնարավորություններ, իսկ մենք ծախսում ենք մեր կյանքն անիմաստ զբաղմունքների վրա կյանքը լիարժեք վայելելու և մեզ համար նոր հորիզոններ</p>	<p>13-րդ շաբաթ</p>	



	բացահայտելու փոխարեն:		
Առակ երկու գայլերի մասին Ու՞մ կկերակրես դու	Մեզնից յուրաքանչյուրի ներսում կա թե՛ բարին ու ազնիվը, թե՛ նախանձն ու եսասիրությունը: Թե դրանցից ո՞րը կարող է հաղթել, պատմում է այս հին ու իմաստուն առակը երկու գայլերի մասին:	14-րդ շաբաթ	
Աբրահամ Լինքոլնի նամակը՝ ուղղված իր որդու ուսուցչին	Հիշեցում այն կարևոր բաների մասին, որոնք պետք է սովորել ամեն տեսակ գիտելիքներից առաջ:	15-րդ շաբաթ	
Լեոնիդ Ենգիբարյան «Աստիճանը»	Մի օր ես հանդիպեցի աստիճանին: Դա մի վերև տանող աստիճան էր, որից այնքան հաճախ ցած են գլորվում: Մենք երկար զրուցեցինք և ես շատ բան հասկացա նրա պատմություններից...	16-րդ շաբաթ	
20 ուսումնական տարվա ձեռքբերումների և բացթողումների քննարկում	Մտորել բացթողումների շուրջ	17-րդ շաբաթ	

## *Ծնողական ժողովներ*

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
06-09-20	1.Նոր ուսումնական տարվա խնդիրները 2.Ծնողակ խորհրդի կազմի ընտրություն	

### *ԴԱՄՂԵԿԻ ԺԱՄ*

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	Դասաժամը	Շաբաթվա օրը	Դասաժամը
Ուրբաթ		Ուրաթ	

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻ**

N	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական-երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				
21.				
22.				

23.			
24.			
25.			

**ԴԱՄՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ**

Դասալսման օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը




*Դասարանի մասնակցությունը ներդրողական և արտադրողական միջոցառումներին*

<i>Ամիսը</i>	<i>Անվանումը</i>	<i>Նպատակը</i>	<i>Վայրը</i>	<i>Պատասխանատու</i>




**ԾՆՈՂԽՈՂՀՐԴԻ ԿԱԶՄԸ**

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հասցե	Հեռախոս
Նախագահ	Սարգսյան Մարինե		93-93-41-42
Նախագահի օգնական	Գալստյան Տարև		98-78-25-26
Նախագահի օգնական	Նիկողոսյան Նաիրա		98-66-48-51





## Դասարանի սոցիալական անձնագիրը

Դասարան \_\_\_ 12 հում/ ա \_\_\_\_\_

Դասղեկ \_\_\_\_\_

1. Երեխաների թիվը դասարանում \_\_\_ 16 \_\_\_\_\_  
ա) աղջիկ \_\_\_ 9 \_\_\_\_\_  
բ) տղա \_\_\_ 7 \_\_\_\_\_
2. Ընտանիքների թիվը \_\_\_\_\_  
ա) լրիվ կազմով \_\_\_\_\_  
բ) ոչ լրիվ կազմով \_\_\_\_\_
3. Վատ ապահովված ընտանիքների թիվը \_\_\_\_\_,  
Նրանցում երեխաների թիվը \_\_\_\_\_ 2 \_\_\_\_\_
4. Բազմազավակ ընտանիքների թիվը \_\_\_\_\_,  
Նրանցում երեխաների թիվը \_\_\_\_\_
5. <<Ռիսկային խմբի>> ընտանիքների թիվը \_\_\_\_\_
6. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում \_\_\_\_\_
7. Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը \_\_\_\_\_
8. Դասերից հաճախակի բացակայելու հակում ունեցող երեխաներ \_\_\_\_\_

---

---

<<Դժվար դաստիարակվող երեխաներ >> \_\_\_\_\_

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ